ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1946, № 11—12 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Проф. Л. А. Оганесян, действительный член Академии медицинских наук СССР и Академии наук Арм. ССР. История медицины в Армении с древнейших времен до наших дней, в 5 частях, 2-ое дополненно издание, ч. ч. I и II, Ереван, 1946. Издательство Академии Наук Арм. ССР.

1928 թ. Երևանում լույս տեսավ Պետական Հաժալսարանի բժշկական ֆակուլտետի ներքին հիվանդությունների կլինիկայի վարիչ բժիշկ Լևոն Հովհաննիսյանի „История медицины в Армении" գիրքը բաղկացած 240 էջից։ Հատորը անմիջապես գրավեց մասնագետների ուշադրությունը, որովհետև, թեև մինչ այդ շատ էր գրվել թե ռուսերեն ու արևմտա-եվրոպական լեզուներով և թե նամանավանդ հայերեն հայ բժշկության մասին, բայց առաջին անգամն էր, որ փորձ էր արվում տալ նրա պատմությունը այդպես ամբողջական և ընդարձակ։

Տասնևութ տարի անց, 1946 թ. պրոֆ. Լ. Հովհաննիսյանը (այժմ իսկական անդամ Հայկ. ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի և ՍՍՌՄ Բժշկական Գիտությունների Ակադեմիայի) սկսեց վերահրատարակել իր այդ աշխատությունը լրացված ու մշակված՝ հինգ հատորով, որի առաջին երկու հատորները արդեն լույս են տեսել։

Երկրորդ հրատարակությունը, համեմատ առաջինի, ունի մի շարք առավելություններ։

Առաջին առավելությունն այն է, որ մինչդեռ 1928 թ. հրատարակության մեջ հայ բժշկության պատմությունը հասցված էր մինչև 18-րդ դարի վերջը, երկրորդ հրատարակության մեջ այն ընդգրկում է թե ամբողջ 19-րդ դարը ու 20-րդ դարի սկիզբը և թե սովետական շրջանը՝ Հայրենական Մեծ պատերազմի բազմանարուստ փորձը ներառյալ։

Երկրորդ առավելությունն այն է, որ 1946 թ. հրատարակության մեջ նյութերը շատ ավելի ընդարձակ են շարադրված, քան առաջին հրատարակության մեջ, ըստ որում ինչ գետեղված էր մեկ հատորում, այժմ պարփակված է երեք հատորի մեջ։

Երրորդ առավելությունը հայ բժշկության պատմության պերիոդիզացիայի առավել մշակվածության մեջ պիտի որոնել։ 1928 թ. հրատարակության մեջ պերիոդիզացիան արված է հիմնականում ըստ հարյուրամյակների, մի սկզբունք, որին, ճիշտ է, հետևում են նաև գրականության պատմագիրներ Գ. Զարբհանալյանը և Ա. Զամինյանը, բայց որը դրանցից շատ առաջ արդեն իրավացիորեն մերժված էր Գաթըրճյանի կողմից։ Պրոֆ. Հովհաննիսյանը իր աշխատության երկրորդ հրատարակության մեջ, թողնելով մի կողմ պերիոդիզացիայի այս անկատար եղանակը, հայ բժշկության ամբողջ պատմությունը տրոհում է հետևյալ շրջանների. ա) սկզբից մինչև 10-րդ կամ 11-րդ դարի առաջին տասնամյակները, այսինքն մինչ

հայկական Վերածնությունը, բ) հայկական Վերածնությունից սկսած մինչև Վերածնությունը Արևմտյան Եվրոպայում, այսինքն՝ 11—14-րդ դարերը որը և հայ բժշկության զարգացման բարձրակետն է հանդիսանում, գ) 15—18-րդ դարերը, որ սկզբում շարունակելով նախորդ դարերի տրադիցիաները, վերջում նշանավորում է անկում, դ) 19-րդ դարը և 20-րդ դարի սկիզբը, որ հայ բժշկության եվրոպականացման շրջանն է և, վերջապես, ե) հայ բժշկության պատմության սովետական շրջանը։

Հայ բժշկության պատմության նոր հրատարակության չորրորդ առավելությունը՝ նրա ընդհանուր եզրակացությունների և գնահատականների մեջ է, որի մասին մի փոքր հետո։

Պրոֆ. Լ. Հովհաննիսյանի գործը վերին աստիճանի հարուստ է փաստերով։ Նա ընդգրկում է հայերեն լեզվով բժշկության ամբողջ օրիգինալ և թարգմանական գրականության տեսությունը, բա որում նկատի են առնված ոչ միայն հատկապես բժշկական գործերը, այլև փիլիսոփայական, կրոնական և ուրիշ բնագավառի գործեր, որտեղ կան բժշկության ու հիվանդությունների վերաբերյալ հատվածներ։ Գիրքը սպառիչ տեղեկություններ է տալիս բոլոր հայ բժիշկների մասին՝ Հայաստանում իրենց գործունեությունը նրանք ծավալած լինեին. թե այլուր։ Գրքում տեղ են գտնում մանրամասն նկարագրություններ բոլոր այն հիմնարկների, որոնք ուրարտական շրջանից և Արշակունիներից սկսած գոյություն ունեին Հայաստանում ու սպասարկում էին աղգաբնակությանը հիվանդության, անօգնականության և այլ դեպքերում—հիվանդանոցներ, բորոտանոցներ, անկելանոցներ և այլն։ և այլն։ Գրքում մանրամասն խոսվում է ժողովրդական բժշկության մասին ու տրվում նրա գնահատականը, խոսվում է դեղաբույսերի մասին Հայաստանում, գործնական բժշկության մասին, հեքիմության մասին և այլն և այլն։

Պրոֆ. Լ. Հովհաննիսյանը բժշկության զարգացումը Հայաստանում մեկուսացած չի դիտում, այլ սերտ կապված քաղաքական անցուդարձերի հետ։ Իր առաջին երկու հատորներում նա, բնականաբար, առանձին ուշադրություն է դարձնում 3-րդ դարի և վերածնության շրջանի քաղաքական իրադրության վրա, ըստ որում պարզում է թե՛ գրերի գյուտի քաղաքական-կուլտուրական նշանակությունը 5-րդ և նրան հաջորդող դարերում և թե քաղաքների զարգացման ազդեցությունը Հայաստանի կուլտուրայի ու քաղաքական կացության վրա սկսած 10-րդ դարից—այս ամենը սերտ կապված, իհարկե, բժշկության պատմության խնդիրների հետ։

Առաջին երկու հատորներում, ինչպես ակնարկվեց, հայ բժշկության պատմությունը պրոֆ. Լ. Հովհաննիսյանը հասցնում է մինչև 15-րդ դարը։ Բժշկությունը Հայաստանում ուրարտների և հեթանոսական շրջաններում, բժշկական գաղափարները ոսկեդարի գրականության մեջ, հունական ազդեցություն, արաբական ազդեցություն, Բագրատունիների ժամանակաշրջանի հայ բժշկությունը, Գրիգոր Մագիստրոս, Մխիթար Հերացի, գործնական բժշկությունը Կիլիկիայում, Միջնադարյան Հայաստանի բժշկական-իրավարանական նորմաներ և այլն և այլն—ահա երկու հատորների կարևորագույն գլուխների թվարկումը։

Փիտական ապարատի տեսակետից պրոֆ. Լ. Հովհաննիսյանի հատորները ունեն հետևյալ գրական կողմերը։ Նախ՝ յուրաքանչյուր գլխին կըց-

ված է մանրամասն բիբլիոգրաֆիա—ռուսերեն և ռասր լեզուներով. ապա նաև հայերեն լույս տեսած գրքերի. աղբյուրների և հոդվածների։

Երկրորդ. հատորներն ունեն հավելվածներ. բառարան այն հայերեն տերմինների, որոնք նույնությամբ գործ են ածվում ռուսերեն («նախարար», «գրարար», «աշխարհաբար» և այլ նման բառեր) ու տվյալ ժամանակահատվածի (5—10-րդ դարեր, 11—14-րդ դարեր) բժշկական ձեռագրերի ցուցակ-աղյուսակներ, որ շատ արժեքավոր են։ Կարելի է ցավել, որ հատորները չունեն անվանացանկեր։ Այս բացը հնարավոր է լրացնել հետագա հատորներում։

Խոսելով հունական ազդեցության մասին հայ բժշկության վրա պրոֆ. Լ. Հովհաննիսյանն ասում է. «Հայաստանում որոշ բարձրության վրա էին պահպանվում անտիկ բժշկության տրադիցիաները. որոնք իրենց հայրենիքում մաշում էին կատարյալ անկման շրջան» (Ա. հատոր. էջ 6)։ «Հնարավոր է այն,—ասում է նա մի ուրիշ տեղ,—որ երբ միջին դարերի սկզբին հունական բժշկության տրադիցիաները դեռ պահպանում էին Հայաստանում իրենց ամբողջ ուժն ու նշանակությունը. հենց այդ ժամանակ Եվրոպայում նրանք սկսել էին համարյա ամբողջությամբ չքանալ» (անդ, էջ 183, նույնը ասվում է նաև 234 էջում)։

Արաբական ազդեցության մասին ասված է հետևյալը. 11—14-րդ դարերում «արաբական բժշկության տրադիցիաները այնքան խորն էին արմատացել հայ բժիշկների գիտակցության մեջ. որ նրանք՝ արաբական բժշկության խորտակումից հետո դեռ շատ դարեր ապրեցին, պահպանվելով համարյա մինչև 18-րդ դարի վերջերը» (անդ, էջ 10)։ «Նշանակալից է այն,—կարդում ենք մի այլ տեղ,—որ երբ արաբական բժշկությունը. իբրև միջազգային կուլտուրայի ազդակ. այլևս գոյություն չուներ, հայ բժիշկները դեռ շարունակում էին գրել արաբական բժշկության ոգով. որի տրադիցիաները նրանք պահպանում էին մինչև 18-րդ դարի վերջը» (անդ. էջ 210)։

Մեջ բերած հատվածներից այն եզրակացությանը կարելի է հանգել. որ. որոշ շրջաններում, հունական և արաբական պրոգրեսիվ բժշկության ներկայացուցիչը հանդիսանալով, հայ բժշկության նշանակությունը չի սպառվել սոսկ հայ իրականությամբ, այլ նա ունեցել է նաև միջազգային նշանակություն։ Այս վերջին հանգամանքի վրա պետք է առավել ուշադրություն դարձնել։

Հայ բժշկության միջազգային նշանակությունը պարզում են նաև պրոֆ. Լ. Հովհաննիսյանի բնութագրումները. ինչպես, օրինակ, Մխիթար Հերացու բնութագրումը, որտեղ ակնհայտ առկա են ազգային նեղ շրջանակներից դուրս գալու տարրերը։ Հետևապես. պրոֆ. Լ. Հովհաննիսյանը բոլոր տվյալներն ունի ավելի լայն մեկնաբանություն տալու հայ բժշկության պատմությանն ու զարգացմանը։

Պրոֆ. Լ. Հովհաննիսյանի հատորները նշանակալից երևույթ են սովետահայ իրականության մեջ։ Նրանք արժանի են ոչ միայն ընդհանուր գնահատման, այլև հատուկ մասնագիտական քննարկման—պատմական տեսակետից, բժշկական տեսակետից. ինչպես նաև աղբյուրագիտության և ձեռագրագիտության ու այլ տեսակետներից։

ԽՈՐԵՆ ՍԱՐԴՍՅԱՆ